

Բանալի բառեր՝ մրցակցություն, մրցակցային միջավայր, ձկան շրջանառության ոլորտ, ձկնաբուծություն, շուկայի ծավալներ, մուտքի խոչընդոտ:

ՐՏԴ 338.439

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԶԿԱՆ ՇՐՋԱՆԱԴՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Էդուարդ ՂԱԶԱՐՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Դավիթ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱԿՀ ապրանքագիտություն և
մարքեթինգի
ամբիոնի ասիստենտ

Ատենախոսության թեմա՝

Տնտեսական մրցակցության իրավիճակը և դրա բարելավման ուղիները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում

Գիտական դեկավար՝

Էդուարդ ՂԱԶԱՐՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմանները բավականին նպաստավոր են արդյունազորական ձկնաբուծության և հատկապես՝ սաղմոնաձկների և թառափագիների բուծման ու աճեցման համար, իսկ ստորերկրյա ջրերի նպատակային օգտագործման արդյունքում տարվա բոլոր եղանակներին հնարավոր է կազմակերպել ապրանքային ձկան արտադրություն:

Շուկայական ազատ մրցակցության պայմաններում վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում ավելացան ձկնաբուծությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների թիվը: Սակայն, սրան զուգահեռ, շուկայում ակտիվ գործունեություն են ծավալում նաև ձկան ներմուծմամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներ:

Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2013-2015թթ. ՀՀ-ում ձկնորսության, ձկնաբուծության ոլորտում կատարված որսի ծավալն աճել է: Պարզաբանման առումով նշենք, որ ՀՀ-ում ձկնորսության, ձկնաբուծության ոլորտում կատարված որսի ծավալը շեշտակի աճ է գրանցել 2009-2015թթ., քանի որ, ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների, 2009թ. այդ ցուցանիշը կազմել է ընդամենը 6015 տոննա, իսկ 2015թ. 23270 տոննա, ինչը կարող է պայմանավորված լինել սովորական մակարդակի նվազմամբ: Ընդ որում, նշված ցուցանիշը ՀՀ ԱՎԾ-ում հաշվարկվում է ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալների հիման վրա: Ինչ վերաբերում է ձկան ներմուծման ծավալներին, ապա դիտարկված ժամանակահատվածում դրանք ունեցել են նվազման միտում՝ 2015 թվականին հասնելով 1443 տոննայի (տես՝ աղյուսակը):

ձկան արտադրության և ներմուծման ծավալները՝ 2013-2015թթ.
(տոննա)

Ժամանակահատված	Արտադրություն	Ներմուծում
2013թ.	15 619	2 152
2014թ.	18 614	1 782
2015թ.	23 270	1 443

ձկան արտադրության ծավալների աճը վկայում է, որ ՀՀ-ում տեղական ձկան մսի նկատմամբ ձևավորված աճող պահանջարկն իր հերթին բերում է ներմուծման ծավալների նվազման:

Հայաստանի Հանրապետությունում 2013թ. ձկան մսի իրացման ծավալները կազմել են 15,4 հազ. տոննա, 2014թ.՝ 18 հազ. տոննա, իսկ 2015թ.՝ 22,6 հազ. տոննա, ընդ որում, իրացման գերակշիռ մասը պատկանում է տեղական արտադրությանը, որի մասնաբաժինը իրացման ընդհանուր ծավալում 2013-2015թթ. աճել է 8%-ով: Հաշվի առնելով, որ ձկան իրացման ծավալների համատարած հաշվառում չի իրականացվում և մանրածախ առևտրի ու հանրային սննդի օբյեկտների միջոցով իրացման ծավալների հաշվառման խնդիրը ևս բարդություններ է առաջացնում՝ աղյուսակում նշված ծավալները հնարավոր է փոքր-ինչ շեղվեն իրացման իրական ծավալներից:

Այսպիսով, պետք է նշենք, որ ձկան թե՛ տեղական արտադրության, և թե՛ ներմուծման ոլորտներում գործունեություն են ծավալում փոքր շուկայական մասնաբաժինների տիրապետող բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտներ, ինչը նշանակում է, որ շուկայում առկա չեն մուտքի խոչընդոտներ, կենտրոնացվածության մակարդակը ցածր է, չկան խոշոր ընկերություններ, եւ այս բոլոր հանգամանքները վկայում են ոլորտում առկա ուժեղ մրցակցության մասին:

Ինչ վերաբերում է ձկան արտահանմանը, պետք է նշենք, որ համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2013-2015թթ. ՀՀ-ից արտահանվել է համապատասխանաբար 2274 տոննա, 2370 տոննա և 2041 տոննա ձուկ: 2015թ. ՀՀ-ից արտահանվել է շուրջ

5,6 մլրդ. դրամի ձուկ: Ձկան արտադրությամբ զբաղված տնտեսվարող սուբյեկտների կողմից 2013-2015թթ. արտահանման ծավալը աճել է՝ 104 տոննայից հասնելով 924 տոննայի, **ավելանալով 820 տոննայով կամ 7.9 անգամ:**

Համաձայն կատարված ուսումնասիրության՝ 2014թ. ՀՀ ձկան միս ներմուծվել է հիմնականում Վիետնամից՝ 27%, Վրաստանից՝ 19% և Նորվեգիայից՝ 14%:

Մրցակցության տեսանկյունից՝ ոլորտում գործող ընկերությունների համար ստեղծված են բարենպաստ պայմաններ և ՀՀ օրենսդրությամբ ձկան շրջանառության ոլորտում գործունեություն ծավալող տնտեսվարողների համար սահմանված են առանձնահատկություններ^{1,2}:

Ձկան շրջանառության ոլորտում առկա ապրանքային շուկաներում մրցակցային դաշտի գնահատման համար դիտարկվել են մի քանի հիմնահարցեր, որոնց ուսումնասիրությունները բնորոշում են.

✓ **Ձուկ ներմուծող և արտադրող ընկերությունների գործունեության ընդհանուր նկարագիրը.**

Ի տարբերություն ձկան արտադրության ոլորտի, որում ընկերություններն սկսել են գործունեություն ծավալել դեռևս 1998 թվականից սկսած՝ ձկան ներմուծման ոլորտն ավելի «երիտասարդ» է, և ներմուծում իրականացնող ընկերությունների գերակշիռ մասը ոլորտում գործում են 2011-2012 թվականներից:


Արտադրող ընկերությունների գերակշիռ մասը գործում է հարկման ընդհանուր դաշտում՝ համարվելով ԱԱՀ վճարող, ինչն արդեն իսկ խոսում է շրջանառության մեծ ծավալների մասին: Ինչ վերաբերում է դրանց հետագա ավելացմանը, ապա ներմուծող և արտադրող ընկերությունների շրջանառության ծավալների ավելացման հիմնական **խոչընդոտներն են՝ ձկան մսի նկատմամբ ցածր պահանջարկն ու արտահանման ոչ կայուն վիճակը:**

Արտադրող տնտեսվարողների հիմնական մասը մանրածուկ ստանում է ձկնկիթից, ընդ որում դրանց մի մասի կողմից մանրածուկ արտադրության, իսկ մյուսների կողմից՝ դրա ձեռք բերման գործոնը որևէ կերպ **չի անդրադառնում ոլորտում մրցակցության վրա:**

✓ **Ձկան արտադրության կամ ներմուծման տեսանկյունից խնդրահարույց գործոնները, կապիտալ ներդրումների վերաբերյալ և ֆինանսական բնույթի հարցեր**

Ձկան ներմուծման ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների համար ոլորտում առավել խնդրահարույց գործոն է փչացումից կորուստների ռիսկը, ներմուծման մաքսատուրքերը և խոշոր ֆինանսական ներդրումների պահանջը (տես՝ գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Ձկան ներմուծման տեսանկյունից խնդրահարույց գործոններ



Որպես ներքին շուկայում անհավասար մրցակցային պայմանների ստեղծման պատճառ դիտարկվում է այլ ներմուծող ընկերությունների կողմից ներմուծման առաջնային շուկաներից ձկան ձեռք բերումը, որի արդյունքում նշված ընկերությունները կարողանում են ապահովել ինքնարժեքի ավելի ցածր մակարդակ:

Ինչ վերաբերում է ձկան արտադրության տեսանկյունից առկա գործոններին, ապա ոլորտում առավել խնդրահարույց են ձկան կերի գնի, հորատանցքի ցամաքելու հավանականության, ոչ բավարար եկամտաբերության և խոշոր ֆինանսական ներդրումների պահանջի գործոնները (տես՝ գծապատկեր 2):

Ի տարբերություն ձկան արտադրության ոլորտի՝ փչացումից կորուստների ռիսկի գործոնն առավել ցայտուն արտահայտված է ձկան ներմուծման ոլորտում, ինչը նշանակում է, որ հենց այս ոլորտում ներմուծման և իրացման ծավալների հետագա ավելացման տեսանկյունից փչացումից ձկան մսի պահպանման խնդրի լուծումը խիստ անհրաժեշտություն է դառնում:

Ինչ վերաբերում է անհավասար հարկային և մաքսային վարչարարության գործոնին, ապա պետք է նշել, որ ձկան շրջանառության ոլորտում հարկային և մաքսային մարմինների կողմից վարչարարության անհավասար կիրառման խնդիրը՝ որպես ոլորտի մրցակցային միջավայրը խաթարող գործոն, կարծես թե բացակայում է, ինչն ապահովում է մրցակցային հավասար պայմաններ ոլորտում գործող բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար:


Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ձկան տեղական արտադրության ոլորտում գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ են 100-200 մլն դրամի կապիտալ ներդրումներ, որոնց հետզման համար պահանջվում է 8 և ավելի տարի, իսկ ըստ ներմուծման դեպքում՝ 30-40 մլն դրամ, որը կարելի է հետ գնել մինչև 2 տարի ժամանակահատվածում:

Այսինքն՝ ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ ձկան ներմուծման տեսանկյունից տնտեսվարողների համար խնդրահարույց են փչացումից կորուստների ռիսկը և ներմուծման մաքսատուրքերը, իսկ արտադրության տեսանկյունից՝ ձկան կերի սակագինն ու հորատանցքի ցամաքելու հավանականությունը:

¹ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, 8-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մաս
² «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, 36-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մաս

Գծապատկեր 2.

Ձկան արտադրության տեսանկյունից խնդրահարույց գործոնները



✓ **Վաճառքի կետերի և իրացման ծավալների վրա ազդող գործոններ**

Ուսումնասիրությունները վկայում են, որ արտադրող և ներմուծող տնտեսավարող սուբյեկտների կեսից ավելին ունեն իրացման սեփական ցանց և մատակարարման մեքենաներ:

Ոլորտում ձկան իրացման ծավալների վրա ազդում են հետևյալ գործոնները՝ ապրանքի գինը 20%-ի չափով, որակը՝ 19%-ի չափով, բնակչության կողմից ձկնամսի սպառման ծավալները՝ 18%-ով, վաճառակետերի սանիտարահիգիենիկ պայմանները՝ 15%-ով, վճարման պայմանները 13%-ով:


Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ ձկան իրացման ծավալների վրա ազդող հիմնական գործոններն են՝ ապրանքի գինը, որակը և ձկան մսի սպառման ծավալները:

✓ **ՀՀ կառավարության 2014 թվականի թիվ 340-Ն և թիվ 1111-Ն որոշումների՝ ձկան շրջանառության ոլորտի մրցակցության վրա ունեցած ազդեցությունը**

Ձուկ արտադրող ընկերությունների շրջանակում իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ կառավարության 2014 թվականի «Այօրինի շահագործվող, ինչպես նաև չշահագործվող հորատանցքերի համար ջրօգտագործման թույլտվությունների տրման, դրանց լուծարման և կոնսերվացման կարգը հաստատելու մասին» թիվ 340-Ն և Նույն թվականի՝ «Արարատյան, Հրազդանի և Ախուրյանի ավազանային կառավարման տարածքներում սակավաջրության և երաշտի մասին» թիվ 1111-Ն որոշումները որևէ կերպ չեն ազդել ոլորտի մրցակցության վրա, 25%-ը այդ որոշումների ազդեցությունը դրական է գնահատել, իսկ 13%-ը՝ բացասական (տես՝ գծապատկեր 3):

Գծապատկեր 3.

ՀՀ կառավարության որոշումների ազդեցությունը ձկնաբուծության ոլորտի մրցակցության և ընկերությունների գործունեության վրա



Մասնավորապես, ձկան շրջանառության ոլորտի մրցակցության վրա վերոնշյալ որոշումների դրական ազդեցությունը եղել է այն, որ փակվել են ապօրինի ձկնաբուծարանները, որ հետևանքով ավելացել են վաճառքի ծավալները: Որպես որոշումների բացասական ազդեցություն, դիտարկվում է նոր հողատարածքի համար թույլտվություն չստանալու կամ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրված ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ջրի քանակի կրճատման հանգամանքները:

Ըստ ելույթի, ձուկ արտադրող և ներմուծող տնտեսավարող սուբյեկտների շուրջ 50%-ի կարծիքով, 2010-2015թթ. ընթացքում ձկան շրջանառության ոլորտում մրցակցությունը չի փոփոխվել: Բացի այդ, մեծ մասը ոլորտում իրենց մրցակիցների որպես ուժեղ կողմ են մատնանշել ֆինանսական մեծ հնարավորությունների և իրացման սեփական ցանցի առկայությունը, իսկ տնտեսավարող սուբյեկտների կողմից գործունեության ընդլայնման հիմնական խնդիրը, կապված է ֆինանսական գործընթացների, պահանջարկի բացակայության և արտահանման անկման հետ:

Որպես ոլորտի մրցակցությունը խոչընդոտող գործոն՝ պետք է դիտարկել մաքսային ընթացակարգերը, մասնավորապես՝ վաճառքի համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության մեկնող անվտանգության պետական ծառայության թույլտվության

Ժամկետները՝ հստակեցնելով, որ սառեցված ձուկը պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքատեսակ է, ուստի՝ ժամկետների ձգձգումը ազդում է ինչպես իրացման, այնպես էլ ինքնարժեքի բարձր մակարդակի վրա:

Այսպիսով, ուսումնասիրության արդյունքում կարող ենք փաստել, որ ձկան շրջանառության ոլորտը մրցակցային է, որտեղ գործում են շուկայական փոքր մասնաբաժինների տիրապետող բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտներ, կենտրոնացվածության մակարդակը ցածր է, չկան խոշոր տնտեսավարող սուբյեկտներ, եւ շուկա մուտքի խոչընդոտներ չեն նշմարվում:

Հայաստանում ձկան շրջանառության ոլորտի առավել զարգացման համար, անհրաժեշտ է՝

- ձկնաբուծական արդյունաբերության արտադրական կարողությունների օգտագործման մակարդակի բարձրացումը,
- ձկնաբուծական արդյունաբերության տեխնիկական վերազինումը և արդիական տեխնոլոգիաների ներդրումը, որոնց արդյունքում արտադրության ծախսերի կրճատումն ու ճյուղի մրցունակության բարձրացումը՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում,
- ձկան կերի տեղական արտադրության ընդլայնումը և վերահսկումը,
- փչացումից կորուստների ռիսկի գործոնի և ձկան մսի պահպանման խնդրի կարգավորման նպատակով սառնարանային տնտեսությունների ներդրումը,
- որակի կառավարման, ստանդարտացման և հավաստագրման միջազգային չափանիշներին բավարարող համակարգի ներդրումը՝ մասնավորապես՝ ձկան պահածոների արտադրության ոլորտում,
- ձկան պահածոների տեղական արտադրության տեսականու ընդլայնումը, ապրանքային տեսքի բարելավումը և որակի բարձրացումը,
- շուկայական գործառնությունների ակտիվացումը և արտահանման ծավալների ավելացումը,
- ձկնաբուծության և ձկան պահածոների արտադրության զարգացման գործում տեղական ու արտաքին ներդրումների համար բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի ձևավորումը,
- ներքին եւ արտաքին շուկաներում ձկան արտադրատեսակների մրցունակությունը բարձրացնելու նպատակով փոխշահավետ առևտրային կապերի ընդլայնումը,
- ԵԱՏՄ անդամ երկրներում նոր շուկաների ձեռք բերման նպատակով որակի և ստանդարտների համապատասխանեցում:

*Ներկայացվել է 10.07.2017թ.
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.*